

ՄԱՅՐ ԱԹՈՌ

† ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ.

Ապրիլի 13-ին Մողնու ս. Գէորգ վանքում իւր մահ-
կանացուն կնքեց նոյն վանքի վանահայր Տ. Ղուկաս վար-
դապետը: Հանդուցեալը 80 տարեկանից անց հասակ ու-
նէր և, չնայած ձերուլթեան, բաւական առողջ էր: Ընդու-
նուել է նա Էջմիածնի վանքի միաբան 1875 թուին, կու-
սակրօն արեղայութեան աստիճան է ստացել 1887 թուին:
Երկար տարիներ պաշտօնավարել է Մողնու ս. Գէորգ,
Գեղարդի և Խոր-Վիրապի վանքերում իբրեւ վանահայր և
գործակալ Աբարանի շրջանի:

Հանգուցեալը աշխատասէր և համեստ միաբան էր և
ընդունակ ժողովրդի հետ համերաշխութեամբ գործելու:
Թող օրհնութեամբ մնայ հանգուցեալի յիշատակը միաբա-
նութեան և ժողովրդոց շրջանում:

→ Ապրիլի 24-ին Երևանի փոխ-թեմակալ գեր. Տ. Խորէն
եպիսկոպոսը Թեմական դպրանոցի հոգաբարձութեան հետ
Երևանից Էջմիածին եկան և, ներկայանալով նորին Վեհա-
հափութեան, իրենց որդիական շնորհակալական զգացմունք-
ները յայտնեցին Հայոց եկեղեց. ծխական դպրոցների ու-
սուցիչներ նշանակելու կարգը նախկին ձևով վերականգնած
լինելու առթիւ:

→ Նոր Վեհարանի շինութիւնը որ կառուցւում է Ման-
թաշեանի ծախքով, համարեա պատրաստ է, քարէ աշխա-
տանքը վերջացել է՝ մնում է ներսի աշխատանքը:

→ Ընթերցանի Մանկավարժական թանգարանի գեղեցիկ
շինութիւնը, որ կառուցւում է Մոսկուաւնակ տիկին Քա-
նանեանի ծախքով և նախաձեռնութեամբ Տեսուչ Տ. Բագրատ
եպիսկոպոսի, նոյնպէս բոլորովին պատրաստ է, միայն
մնում է ներսի աշխատանքը:

→ Ընթերցանի միւս նոր շինութիւնը, որ պէտք է լինի
բնական գիտութեանց համար՝ մի քանի բաժանմունքներով,

և թատրոնի մեծ դահլիճ — մարմնամարզարան, կառուցուած է Մոսկուաբնակ թարասեանների ծախքով և նախաձեռնութեամբ Տեսուչ Տ. Բազրատ եպիսկոպոսի: Քարէ աշխատանքի մեծագոյն մասը կատարուած է և ըստ երեոյթին գեղեցիկ ճարտարապետութիւն պէտք է ունենայ այդ կաքուր շինութիւնը:

→ Մայր Աթոռի Մեծ առուն, որի աշխատանքները սկըսուած են դեռ 1912 թուից և որով Մայր Աթոռը այսուհետե հնարաւորութիւն պէտք է ունենայ իւր՝ մինչև այժմ ջրից զուրկ մնացած հողերը ոռոգել: Ձանգու գետից ստացած առատ ջրով՝ պատրաստ կը լինի մինչև առաջիկայ յունիսի 15-ը: Զրաբաշխական վարչութիւնից իրաւունք է ստացել էջմիածնի Սինօզն այդ առուով անցկացնել մինչև 51 բաշ ջուր, որից 24 բաշը պատկանում է էջմիածնի վանքին, 15-ը Վաղարշապատի գիւղացիներին, 8-ը Չորանքարայի թուրք գիւղացիներին և 4-ը Ալիբէկու հայ գիւղացիներին: Ձանգուից մինչև էջմիածին, առուի երկարութիւնն է 20 վերստ, ընդամենայն ծախս կը լինի մօտ 120 հազար ռուբլի: Իւրաքանչիւր բաշի համար ծախսուած է 2353 ռուբլի, այդ հաշուով էջմիածնի վանքը պէտք է վճարի 56,472 ռ., որից Բագուի մի քանի հարուստներ, գլխաւորութեամբ մեծարգոյ պ. Արշակ Դուկասեանի, ի նպաստ այդ առուի շինութեան Մայր Աթոռին բնծայաբերել են մօտ 43 հազար ռ., իսկ մնացած մօտ 13 հազարը կը լինի Մ. Աթոռի գանձարանից: Վաղարշապատցիք պէտք է վճարեն 35295 ռուբ. մինչև այժմ վճարել են միայն 10526 ռուբլի, պակասը ծախսել է վանքը, նոցանից ստանալու պայմանով, Չորանքարեցիք 18824 ռ. վճարել են 10976 ռ. Ալիբէկուեցիք 9412 ռուբլի՝ վճարել են Չորանից մինչև այժմ միայն 4102 — 57: Գիւղացիների պակաս գումարները վճարուել են Վանքի գանձարանից՝ աշխատանքները չընդհատելու պատճառով, մինչև ջրից օգտուելու օրը նոքա պէտք է ըստ պայմանի իրենց պարտքը վճարեն Մ. Աթոռի գանձարանին: Առուի աշխատանքների վրայ Սինօզի կողմից հսկում է առուի շինութեան Յանձնաժողովի նախագահ Տ. Մուշէ վարդապետը: